

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՆ ՊԵՐԾ ԶԵՅԹՈՒՑՅԱՆԻ
«ԱՄԵՆԱՏԻՏՈՒՐ ՄԱՐԴ» ՎԻՊԱԿՈՒՄ*

Արտակ Ղուլյան

Բանալի բառեր՝ ազատություն, անազատություն, անհատ, նմանակ, երկատում, երկաշխարհություն, երկվություն, շրջանակ:

Դերձ Զեյթունցյանը 60-ականների գրական սերնդի վար ներկայացուցիչներից է: Այս շրջանի գրողները իրենց ստեղծագործություններում բարձրացնում էին համագոգային և համամարդկային հնչեղություն ունեցող խնդիրներ: Իհարկե, մեծ դժվարությամբ, սակայն նրանցից շատերին, այդ թվում և Զեյթունցյանին, ինչ-ինչ հնարներով հաջողվել է արտացոլել մարդու ազատության գաղափարը՝ իրեն համամարդկային անվիճելի արժեքը: Չնայած խորհրդային մամլիչի «ամենատես աչքին», այնուամենայնիվ, 60-ականների սերնդից շատերը կարողացան համառորեն պահպանել իրենց Ես-ը, չկորցնել դիմագիծը, չվերածվել սոցիալիստական գաղափարախոսությունը երգող «պալատական գրողների»:

Մարդու ազատության թեման իրատապ էր բազմաթիվ գրողների համար, բայց Զեյթունցյանը եզակի է այս թեմայի արտացոլման գործում: Նա ցուց տվեց, որ մարդ կարող է ծնորք բերել կամ կորցնել ազատությունը՝ անկախ գոյության պայմաններից: «Կարևոր այն է, որ մարդ ազատ զգա իրեն, թիչ մարդիկ կան, որոնք ազատության մեջ բանտ են ստեղծել իրենց համար» [1]:

Ի՞նչ էր ազատությունը Զեյթունցյանի համար կամ ինչ էր անազատությունը: Այս հարցի պատասխանը հուզելի է նրան իր ամբողջ ստեղծագործության շրջանում, բայց արդեն «Ամենատխուր մարդը» վիհակում այն կարծես դառնում է որոշակի. «Ստեղծագործությունը հենց ինքը ազատությունն է: Ազատությամ ամենակատարյալ ձևը»[2]:

Անհատի ազատության բացահայտ կոչ Զեյթունցյանն անում է արդեն «Կլող Ոորերս Իգերլի» վեպում [3]: Տողերիս հեղինակին մի առիթով Զեյթունցյանը պատմել է, թե ինչպես «Կլող Ոորերս Իգերլի» վեպի տպագրությունից ընդամենը որոշ ժամանակ անց իրեն են այցելում խորհրդային ԿԳԲ-ի աշխատակիցները և բազմաթիվ ու բազմատեսակ հարցերի միջոցով փորձում պարզել, թե վեպում հատկապես ինչ էր մկանի ունեցել հեղինակը: «Ճի՞շտ է, որ ազատության կոչ ես արել», - հարցուել էին նրանք: Ազատասեր գրողին փրկել էր միայն երջանիկ պատահականությունը. վեպն այդ օրերին Սովորված տպագրվում է ռուսերեն թարգմանությամբ: Այսինքն՝ բացառվում է, որ ազատության «Ենթատերսու» ունեցող վեպը թարգմանվեր ռուսերեն, առավել ևս՝ Մոսկվայում:

Ակաած «Կլող Ոորերս Իգերլի»-ից Զեյթունցյանը ծեռնամուխ եղավ մարդու ազատության թեմայի և դրանով մարդ-գաղտնիքի բացահայտմանը բոլորովին այլ եղանակով, որը գրականության մեջ հայտնի է իրեն անծի երկատում: Ըստ Էուլյան, չնայած Զեյթունցյանի հարուստ ժառանգությանը և դրան նվիրված ոչ պակաս հարուստ գրաքննադատական աշխատանքներին, առ այսօր կարծես աչքաթող է արվել կամ խորությամբ չի ուսումնասիրվել նրա արկեստին բնորդ մի այնպիսի կարևոր

* Հոդվածն ընդունվել է 15.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և Ժուրնալիստիկայի ամբիոնը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

յուրահատկություն, որն է՝ երկատված հերոսի (նմանակի) ֆենոմենը, երկաշխարհությունը, երկվությունն ընդհանրապես:

Անձի երկատվելու, երկու աշխարհներում ապրելու և նմանակի հիմնախնդիրը, դեռևս իին ժամանակներից սկսած, քննարկման առարկա է եղել բազմաթիվ գրողների համար:

Ընդունված է համարել, որ այս ֆենոմենը վիխտիայական-գեղագիտական տեսանկյունից ամենայն խորությամբ սկսեց գիտակցվել հենց ռոմանտիզմի շրջանում [4]: Դա բացատրվում է նրանով, որ հատկապես ֆրանսիական հեղափոխությունից հետո արվեստի առջև նոր խնդիր դրվեց. արտացոլել մարդու լինելության հարցն ամբողջությամբ, իր ողջ հմայքով: Անհատի բացարձակացումը՝ «անվերջ անհատականացումը», դարձավ բոլորով նոր տեսակի հերոսի ակունքը: Անհատը իր օրենքները թեև ինքն է պարտադրում իրականությանը, սակայն ամենուր հանդիպում է հակագողեցության: Եվ հենց այս հակասականության մեջ է ծնվում օբյեկտիվի և սուբյեկտիվի բախումը. սեփական օրենքներով ապրող գրողի անսահմանակակ հնարավորություններ ու իրական կյանքում առկա պայմաններ: Այստեղից է սկսվում աշխարհի յուրօրինակ երկատումն իսկապես առկայի իրականի և ռոմանտիկ հերոսի գիտակցության մեջ՝ անուրջների աշխարհում գոյություն ունեցող անհրականի, ֆանտասիկ միջեւ: Որմանտիկները չեն ճանաչում օբյեկտիվ իրականության պարտադրած պայմանները և «պաշտպանվում էին» նրանից փախուստով դեպի սեփական երևակայությամբ ստեղծած՝ իրենց ֆանտազիաների աշխարհ:

Երկաշխարհությունը պայմանավորեց անհատի երկատումը. հերոսը փլուզվում է իրեւ ամբողջականություն, տրոհվում է մասերի (հիմնականում երկու մասի), որոնք սկսում են պայքար մոել միմյանց դեմ:

Երկատման ֆենոմենն իր վառ արտացոլումը գտավ գերմանական ռոմանտիզմի այնպիսի վառ ներկայացուցչի ստեղծագործական ժառանգությունում, որպիսին է. Հոֆմանն է [5]:

Հայ գրականության մեջ Նմանակի մոտիվի օգտագործմամբ մարդու ազատության թեմայի մարմնավորման հրաշալի օրինակ է Պ. Զեյթունցյանի «Ամենատիտուր մարդը» վիպակը, որը ստագրվեց 1973 թ.:

Վիպակի հիմքում թ. Զադիսի հայտնի «Ակատրասի կալանավորը» փաստագրական աշխատությունն է [6], որտեղ պատմվում է 3-րդ դասարանի կրթություն ունեցող մի մարդու՝ Ռոբերտ Ստրաուդի մասին, որը սպանել էր իր կնոջը նվաստացնող մի տղամարդու, ինչի համար դատապարտվել էր ցմահ ազատագրված: Կալանավայրում նա սկսում է կարդալ գրքեր, ստացած գիտելիքների շնորհիվ կարողանում է բուժել իր բանտախուցը պատահմամբ ընկած հիվանդ ճնճղուկին: Այնուհետև նոյն խցում նրան հաջողվում է բազմացնել ճնճղուկներին և նրանց վրա փորձեր կատարելով՝ հասում է անսպասելի արդյունքների: Նա գիտական աշխարհում, մասնավորապես թռչնաբուծության բնագավառում, ծեռք է բերում մեծ հեղինակություն, սակայն ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ հայտնի գիտնական Ստրաուդը ցմահ բանտարկյալ է:

Ինչու՞ Զեյթունցյանը ստեղծագործության գլխավոր հերոս դարձրեց հենց Ստրաուդին: Պատասխանը միանշանակ է. Ստրաուդը այն բացարիկ անհատներից է, որ կարողացել էր անազատության պայմաններում ծեռք բերել ազատություն (ի հակադրություն թագավորի, ով, թվում է, թե պետք է ամենաազատ մարդը լիներ, բայց իրականում իր իսկ հրչակած օրենքների գերին է): Իսկ մարդու ազատության թեման, ինչպես գիտենք, Զեյթունցյան-մտածողի տարերքն է:

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Ստեղծագործության սկզբում Զեյթունցյանը գրում է. «Ես կպատճեմ մեր հարյուրամյակի ամենատխուր մարդու մասինե» [7] և ուշագրավ է, որ, նաև չնայած վիպակի վերնագրին, Ստրառուի տիխորության մասին ոչ մի տող չկա: Ընդհակառակը, նա ինչոր տեղ նույնիսկ ուրախ է, որ վերջապես գտել է իր ազատությունը: Սակայն միաժամանակ պետք է նկատել, որ տիխուր տրամադրությունը ընթերցողին ուղեկցում է ամբողջ պատումի ընթացքում, որովհետև գնալով ավելի որոշակի է դարձնում անհատի ողբերգությունը: Դա անհատ-հասարակություն պայքարն է, որտեղ միադեմ հասարակությունը ամեն գնով ծգություն է հասմելու անհատի ոչնչացմանը: Ստրառուդը Ակատրասի դեմ դուրս չի եկել, Ակատրասն է Ստրառուի դեմ ելել» [8]: Եվ այդ պայքարում անհատի կործանումը անխուսափելի է. «Մասսան ամեն ինչ է, իսկ անհատը՝ ոչնչ» [9]:

Զեյթունցյանը ստեղծել է հերոսների մի կուր համակարգ, որոնցից շատերը թեև անուն չունեն (թագավոր, Տղամարդ ծեծող, բանտապետ, նախագահ, առաջին մինիստր, արդարադատության մինիստր, տասներկու տղամարդիկ և այլն), սակայն բոլորն էլ այս կամ այն չափով կոչված են լրացնելու Ստրառուի կերպարը. իսկապես, առանց այս կերպարներից յուրաքանչյուրի առկայության, Ստրառուի կերպարն ամբողջական չէր լինի:

Ինչպես նախորդ՝ «Կլոր Ռոբերտ Իգերլի» վեպում, այնպես էլ այստեղ գլխավոր հերոսը երկատված է: Զեյթունցյանի՝ հերոսին երկատելու գործում ունեցած հաջողությունը մեծապես պայմանավորված է համաշխարհային գրականության, մասնավորապես ռոմանտիզմի գրականության քաջածանոթությամբ, Նմանակի կերպարի ֆեռուսնեալ առանձնահատկությունների զարմանալի հմացությամբ:

Երկվության հիմքի վրա է հիմնված վեպի հերոսների համակարգը. և՝ Ստրառուդը, և՝ թագավորն ունեն իրենց նմանակները, ըստ որում ոչ միայն մեկ, այլ մի քանի: Ստրառուն ու թագավորը հանդես են գալիս հակադիր դիրքերից: Նրանք թշնամիներ են, չնայած ունեն թագմարիկ նմանություններ: «Թագավորն ու նա տարեկիցներ էին: Դեռ ավելին, թագավորը գահ էր բարձրացել հենց այն տարին, երբ Ստրառուդը մարդ էր սպանել ու թանտարկվել» [10] կամ «Նրանք նոյն թվականին էին ծնվել: Նոյն թվականին էլ որոշվել էր նրանց ճակատագրերը: Մեկը թագավոր էր դարձել, մյուսը՝ թանտարկյալ: Եվ այդ երկու հակադիր ճակատագրերը խաչաձևել էին, խառնվել իրար ու այլս անհնար էր դրանք անջատել» [11]:

Այս գոյգի՝ գեղարվեստական տեսանկյունից հաջողված հակադրության մեջ Զեյթունցյանը հրաշալիորեն տվել է ազատության վերաբերյալ իր պատկերացումը: Ստրառուդը շարժուն հերոս է, ընդ որում նա շարժվում է ոչ միայն տարածության մեջ, այլև ժամանակի, ունի ստեղծագործելու բացարիկ հնարավորություն, որը ոչ չի կարող խել նրանից. «Ուրեմն, ի՞նչ է դուրս գալիս, Առաջին մինիստր,-էլ ավելի մոռյվեց թագավորը:- Դուրս է գալիս, որ նա... ազան է:

- Թույլ տվեք առարկել, ծերդ մեծություն: Նա կալանավոր է:

- Հիմար,-հետզիետե ավելի էր անհամաստանում թագավորը,-նա ինքն է գտել իր ազատությունը: Ինքն է ծեռք բերել: Անկախ ծեր օրենքներից և վճիռներից» [12]:

Մինչդեռ թագավորը անշարժ հերոս է, նրա կյանքը մի իսկական բանտ է. թագմարիկ սենյակներից բաղկացած պայտադր իրականում մի մեծ թանտախուց է, որից դուրս գալի անհնար է, քանի որ ինքն է իր օրենքներով իրեն դատապարտել անազատության, ինչի մասին, սակայն, գիտակցում է թագական ուշ. «Նա այդպես հանգիստ ու երջանիկ էլ կապեր մինչև իր կյանքի վերջը, եթե մի դեպք չխանգարեր նրա անդորրը, ամեն քայլափոխին չինտապնդեր նրան և չդարնար այնպիսի հարց, որով

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

միայն ինքն էր ընդունակ գրաղվելու»[13]: Գնալով նրա անկարողությունը վերածում է ողբերգության. «Չեմ հասկանում, ես՝ այս երկրի թագավորս, ուրեմն իրավունք չունե՞մ իմ ուզածն անելու»[14]:

Ճիշտ է, նրանք ունեն շատ ընդհանուր գծեր, օրինակ՝ թագավորը նկարում է, նույնիսկ վաճառում է նկարները, Ստրաուդը գրաղվում է թօչնաբուժությամբ, գրում է գիտական հոդվածներ, բայց եթե թագավորի դեպքում արվեստում ոչ թե սիրողական, այլև ավելի շուտ կեղծողի տպագորություն է թողնում, ապա Ստրաուդի պարագայում ունենք իրոք գիտական բարձունքների ձգողության անհատ: Ձեյթունցյանը ևս մեկ անգամ հաստատում է՝ գիտությունը ազնիվներին է վիճակված [15]: Ստրաուդը ազնիվ մարդ է, այն աստիճան ազնիվ, որ դա նույնիսկ Ատենակալների գարմանքի առարկա է դառնում (ատենակալներն այստեղ մարմնավորում են հասարակությունը). «Անգրագետ լինել և ազնվություն գործե՞լ, -վիրավորվեց Առաջին ատենակալը, և այդ նորությունը խորապես ցնցեց նրան: -Օհո, դա արդեն հանդգնություն է: Այդ դեպքում նրա ազնվությունը բացատրվում է անկատարելության կոնալեքտով»[16]:

Ստրաուդը թօչունների բուժումով անում է անկարելին, և այդ ամենը անազատության պայմաններում, մինչդեռ թագավորի դեպքում տեսնում ենք հակառակը. ազատության մեջ նա գործում է չարիքներ. «Քանի-քանի չարիքներ ենք գործել ես և դու: Հիշու՞՞ն ես ոնց բունավորեցինք իմ զարմիկին: Ոնց լաց եղանք գերեզմանին: Ինչ շուրջ թաղեցինք»[17]: Այս վերջին միտքը հետազոյում գեղարվեստական ավելի մեծ ուժով ներկայացվելու է, Արշակ Երկրորդի պատմավեպում [18]:

Ստրաուդի Նմանակներից է բանտապեստը, նրա ներքին Ես-ը, որը Ստրաուդի հետ մշտական պայքարի մեջ է. «Եթե մի օր հանկարծ ազատվեմ այս ատելի մարդուց, Երկի նորից նրա կարիքն զգամ: Առանց նրա ես արդեն չեմ պատկերացնում իմ կյանքը... Այս ատելի մարդուն էլ կողքին տեղավորեք»[19]:

Թվում է, թե Ձեյթունցյանը հանձինս այս երկու կերպարների ստեղծել է իրավիճակային հերոսներ, սակայն, իրականում, մենք գործ ունենք իսկական նմանակների հետ, այս պարագայում նույն անձի երկու կենսերի հետ: Այսինքն՝ խոսքը Երկատված կերպարի մասին է: Նրանք կարծես տարբեր մարմիններ են, բայց մտածում են միևնույն կերպ. «Ի վերջո ես էլ եմ ցմահ բանտարկված»[20], -ասում է բանտապեստը:

Վիպակը կառուցված է քնի և իրականության փոխհարաբերության հենքի վրա: Ամբողջ ընթացքում հենց երազն է կապում Ստրաուդին և իր նմանակներին: Երազում նրանք բոլորովին այլ մարդիկ են ու ապրում են բոլորովին այլ կյանքով. «Օրվա մեջ նա ուներ հասուկ ժամեր, երբ իյուրեր էին զալիս իր մտապատկերմերում: Այդ ժամերին նա արդեն մենակ չէր: Նախօրոք կարգի էր բերում սեղանը, դասավորում գրքերը և հավաքում հացի փշրանքները: Նոյնիսկ գրաններն էր դատարկում և թափում փշրանքներից սարքած գնդիկները»[21]:

Վիպակի սկզբից մինչև ավարտը գլխավոր հետևում են սև սմոկինգ հագած 12 տղամարդիկ, որոնք անընդհատ նեղացնում են քառակուսին: Սև գույնը բացասականի խորհրդանշին է, սմոկինգը՝ պաշտոնականի, այսինքն՝ ամեն ինչ իր կաղապարի մեջ, որն այստեղ ներկայացված է քառակուսու տեսքով, իսկ 12-ը՝ տարվա ամիսների թիվն է, ինչպես նաև օրվա ժամերի, այսինքն՝ օր ու գիշեր, ամբողջ տարին գլխավոր հերոսը՝ իբրև անհատ, պայքար է մղում հասարակության դեմ (12 տղամարդիկ): Նրան նոյնպես դատում են 12 անգամ. «Տասներկու տղամարդիկ նորից շարժեցին աթոռները, քառակուսին բոլորովին սեղմվել էր, օղակել Ստրաուդին: Ստրաուդը բարձրացրեց ձեռքերը: Բայց ինչու սմոկինգներով: Երբ ոչ ինքը, ոչ էլ իր շրջապատից որևէ մեկը երեք չեն հագել սմոկինգ: Նոյնքիսկ չեն երազել: Միայն թե

ՄԵՄՐՈԴ ՄԱՆԵՐ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

առաստաղին չնայեր: Միայն թե շրջանակը չտեսներ» [22]:

Զեյթունցյանը վարպետորեն օգտագործել է իրականի և պայմանականի փոխներափանցման գեղարվեստական հնարյաց Երբեմն նույնիկ այն տպավորությունն է ստեծվում, որ այդ ամենը իրոք երազ էր: Իրականի ու երազի փոխհարաբերությունը նպաստում է անորոշության էֆեկտի ստեղծմանը: Ընդ որում անարժանահավատը վերածվում է ավելիին, քան պարզապես չիմացությունը՝ կասկածի տակ դմելով հենց իրականի հասկացությունը:

Ստարուղ նկատում է, որ աշխարհը կեղծ է, և անհատը անգոր է հասարակության դեմ պայքարում. «Ես մենակ եմ եղել: Իմ դեմ մի ամբողջ մեքենա էր գործում» [23]:

Կիպակի վերջում զյուավոր հերոսը Երկատվում է: Ծերունի Ստրաուդին բանտում այցի է գալիս Երիտասարդ Ստրաուդը: Եթե Երիտասարդ Ստրաուդը իր մտապատկերներում ունի կյանքի բնական ընթացքը, ապա արդեն վաղուց բանտային կյանքին հարմարված ծեր Ստրաուդին ամենայնիվ հարիր չէ պարզեցված ազատությունը: Զեյթունցյանը փորձում է նրանց Երկրոսության միջոցով բացահայտել Երկու Ստրաուդներից յուրաքանչյուրին սահմանված կյանքի հաշվեկշիռը: Եվ, ինչպես սպասվում էր, բարոյական հաղթանակի հրավունքը իրեն է վերապահում ծեր Ստրաուդը. «Դու հաղթել ես ինձ, Ստրաուդ,- Եռանդով սկսեց ապացուցել պատահին: - Ես ընդունում եմ, որ հաղթել ես: Գիտե՞՞ս որն է մեր տարբերությունը: Ես ազատ էի: Իսկ դու նվաճել ես ազատությունը» [24]:

Եվ ծեր Ստրաուդի շուրջերով Զեյթունցյանը տալիս է ազատության իր բանաձեռ. Մարդը մահկանացու է... Բայց նա Երեք ստրուկ չի դառնա: Այդ բարի ոչ մի հիմաստով: Եթե իմքը կամավոր ընտրումի ստրկությունը [25]:

Նմանակի գեղարվեստական մոտիվը իր զարգացումը գտավ Զեյթունցյանի հետագա գործերում, հատկապես՝ «Արշակ Երկրորդ» պատմավեպում, իսկ 2003 թվականին տպագրված «Ծրար հայելու մեջ» վիպակը [25]ամբողջությամբ կառուցված է «Երկատվածություն» գեղարվեստական մոտիվի հիման վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զեյթունցյան Պ., Ամենատխուր մարդը, Եր., 1973, էջ 111
2. Նույն տեղում, էջ 85:
3. Զեյթունցյան Պ., Կլոդ Ռոբերտ Իգերլի, Եր, 1968:
4. Բերկովսկի Ն, Ուսմանստիզմը Գերմանիայում, Մոսկվա, 2001, էջ 14
5. Գոֆման Է.Տ.Ա. Собрание сочинений: в 6 т., М., 1991.
6. Զեյթունցյան Պ., Ամենատխուր մարդը, Եր., 1973, էջ 23:
7. Նույն տեղում, էջ 5:
8. Նույն տեղում, էջ 31:
9. Նույն տեղում, էջ 116:
10. Նույն տեղում, էջ 55:
11. Նույն տեղում, էջ 112:
12. Նույն տեղում, էջ 55:
13. Նույն տեղում, էջ 54:
14. Նույն տեղում, էջ 55:
15. Քամյու Ա., Ստեղծագործությունը և ազատությունը, Մոսկվա, 1990:
16. Նույն տեղում, էջ 29:

ՄԵԽՈՂԻ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

17. Զեյթունցյան Պ., Ամենատխուր մարդը, Եր., 1973, էջ 63:
18. Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, Եր., 1977:
19. Զեյթունցյան Պ., Ամենատխուր մարդը, էջ 78:
20. Նույն տեղում, էջ 90:
21. Նույն տեղում, էջ 39:
22. Նույն տեղում, էջ 23:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում, էջ 137:
25. Նույն տեղում, էջ 141:
26. Զեյթունցյան Պ., Ծրաբ հայելու մեջ, Գարուն, Եր., 2003:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ազատության թեման Պերճ Զեյթունցյանի «Ամենատխուր մարդ» վիպակում
Արտակ Ղուլյան**

Ազատության թեման իր փիլիսոփայական արտացոլումն է գտել 60-ականների սերնդի վար ներկայացուցիչներից մեկի՝ Պ. Զեյթունցյանի ստեղծագործության մեջ։ Ազատությունը կարծես Զեյթունցյանի աշխարհայացքի էականությունն է։ Խորհրդային գրաքննության պայմաններում մարդու ազատության մասին մտածող գրողը, բնականաբար, բացահայտ չէր կարող խոսել, և նա Վարպետորեն քողարկել է օգտագործելով Նմանակի ֆենոմենը։ Երկատված մարդու կերպարը կարմիր թելի պես անցնում է նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում, սակայն առավել ընդգծված տեսք ստացավ «Ամենատխուր մարդ» վիպակում՝ իր յուրօրինակ զարգացումն ունենալով նաև դրան հաջորդող ստեղծագործություններում։

РЕЗЮМЕ

**Тема свободы в романе Перча Зейтунцяна “Самый грустный человек”
Артак Гулян**

Ключевые слова: *свобода, несвобода, личность, двойник, раздвоение, двойственность, рамка*

Тема свободы нашла свое философское воплощение в произведениях одного из ярких представителей литературного поколения 60-х годов прошлого века Перча Зейтунцяна. Свобода является его мировоззрением. В условиях советской цензуры тему свободы личности умело замаскировал, используя феномен “двойника”. Тема раздвоения личности красной нитью проходит через все его произведения, но получила определенно выраженную форму в романе “Самый грустный человек”, а также имела свое уникальное развитие в последующих произведениях.

SUMMARY

The theme of freedom in "The Saddest person" by Perch Zeytuntyan
Artak Ghulyan

Keywords: freedom, unfreedom, individuality, a person's double, divarication, duality, frame.

The theme of freedom found its philosophical expression in the works of Perch Zeytuntyan, one of the brightest representatives of the literary generation of the 60-s. The freedom is the epicenter of his outlook. Being subjected to the Soviet censorship, the author skillfully disguised the theme of individual's freedom by using the phenomenon of the "double". The issue of split personality runs like a thread through his works but it was vividly expressed in "The saddest man". This theme also had its peculiar development in the other works by this author.